

232

Snn-7-

1757/7 422msd.

825
7-78

52/7msd  
1894

82-93

8-78

325

ԵՄԵՐԻԿԸՅԻ Դ-Ը ՏՕԿԻ



ԱՅՂԻՒՆ ԶԳՆՈՒՄԻ

2004



Էջարան Մայր Աթոռոյ Ս. Էջիմովոյ

1894

825

8-78

825  
7-78  
Կար - Դար 3  
Ա. ՌԻՏ. Գրքերի Կենտրոն

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՄԱՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴՐ ՏՕԿԳ

Մ. Ս. Գրքերի Կենտրոն  
Մեյ 1922

# ՄԵՂԻՒ ԶՂՋՈՒՄՆ

Թարգմանություն

ԽՈՐԻՆ ԳԱՀԱՆԱՅ ԽԱՆԶԱՏԵԱՆԻ

1002  
700  
9519



ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ս. ԷԶՄԻՍՏԻՆԻ

1894





5976

Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ՄԿԻՏԵԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՍԻ

ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ա Ձ Կ

**Ա**մէն ատեմ ձեզ, եմէ ոչ դարձչիք եւ  
կոյիչիք իբրև դմանկաի, ոչ մտանի-  
ցիք յարքայութիւն երկնից» **ասումէ Քրիստոս.**  
**մանուկներն իւրեանց արդարութեամբ**  
**այնչափ մօտիկ էին Տիրոջ սրտին, որ**  
**Նա օրինակ է զնում բոլոր մարդկանց:**  
**Այսքան դարերից յետոյ այսօր եւս ման-**  
**կավարժութիւնը կեդրոնացրել է իւր**

կրթութիւնը մանուկների վրայ, քանի որ մանուկներն են այն մատաղ և ճրջմարիտ ուղղութեան տրամադիր բնաւորութիւններն, որոնք եթէ աստուածային յատուկ ճանապարհով մեծանան, արժանի կմնան միշտ Աստուծոյ արքայութեան և օգտակար անդամ կլինին Ազգի և Եկեղեցւոյ: Ուսումնարանն և ընտանիքը ձեռք ձեռքի տուած պէտք է մաքուր պահեն կրթութեան այս ճանապարհը, սակայն այդոնց մէկ հզօր օգնական էլ կայ, այդ նպատակայարմար ընթերցանութիւնն է, որ պէտք է դաստիարակի բացակայութեան տեղը բռնէ և ճշմարտութեան ու սրբութեան զգացմունքները զարթեցնէ նոցա մէջ մշտապէս:

Ս. Էջմիածնի Տպարանը ձգտելով ժողովրդի ճշմարիտ աստուածային ուղղութեան յարմար ընթերցանութիւն տա-

րածելու, բանումէ այսով մի նոր շրջան ևս մանուկների մատաղ հոգու համար: Մանուկներից սկսելով ճշմարիտ դաստիարակութիւնը, մեծ զարկ տուած կլինինք և մեծերի արդար գործունէութեան և զգացմանց ուղիղ ընթացքին: Ուրեմն յուսանք, որ այս փոքրիկ և դիւրամտաչելի գրքոյկները մեծ ընդունելութիւն կգանեն Հայ ժողովրդի մանաւանդ ընտանիքների և ծխական դպրոցների մէջ, որով և մենք քաջալերուած կշարունակենք այս սուրբ գործը:



Ա.

### Մ Ե Ղ Ք Ի Զ Ղ Զ Ո Ւ Մ Ն .

• Եւ դուրս գնալով քարոզում էին՝  
որ ապաշխարեն՝ (Մարկ 2. 12).



անուկներ) այսօր  
ձեզ համար մի զրժ-  
ուար խօսք եմ կա-  
մենում զործածել  
և զրա համար կաշ-  
խատեմ հասկաց-  
նել ձեզ թէ նա ինչ է  
նշանակում: Ղաւ—պայճան  
խօսքն է: Ուրեմն լսեցէք: Ղիցուք փոք-

րիկ աղջիկը ուսումնարան գնալով՝  
խնդրում է մայրիկից մի նոր զրքոյկ:  
Մայրիկը այսպէս է ասում նրան. «Լաւ,  
Մարիամ, ես կգնեմ քեզ համար զըր-  
քոյկ, եթէ միայն դու ջանասիրութեամբ  
կսովորես և երկու շաբաթ շարունակ լաւ  
կպահես քեզ: Ահաւասիկ, ինչպէս տես-  
նում էք, պայճան սրան եկք ասում: Մի  
օրինակ էլ ասեմ: Փոքրիկ մանուկը հօ-  
րից խնդրում է զբօսներու տանել. հայրը  
այսպէս է պատասխանում նրան. «հենց  
վաղը ման կածեմ քեզ միայն այն պայ-  
ճանով, եթէ այսօր ամբողջ օրը խելօք  
և լաւ կպահես քեզ»: Հիմա հասկացա՞ք  
թէ ինչ ասել է պայման:

Ուղիղ հենց այդպէս ամեն բան աշ-  
խարհի վրայ իւր պայմանն ունի, և ամեն  
բանի համար ինչ էլ որ լինի՝ մենք պէտք  
է որ և է մի զործ կատարենք: Ես ցոյց  
կտամ միայն չորս օրինակ, որտեղ պա-

հանջուումէ յայտնի պայման:

1. Աստուած այնպէս է սահմանել, որ մանուկները այն պայմանով միայն կարող են ամենին սիրելի լինել, եթէ նրանք կհնազանդուեն իրանց ծնողներին և ուսուցիչներին, և դէպի ամենքը քաղցրութեամբ կվերաբերուեն:

2. Աստուած այնպէս է կարգադրել, որ մարդս կարող է զիտնական դառնալ այն պայմանով միայն, եթէ նա առանց ժամանակ կորցնելու անդադար կպարսպէ իւր գործով:

3. Աստուած այնպէս է սահմանել որ դեղորայքը այն պայմանով միայն հիւանդին կարող են օգնել, եթէ նա այդ կրնդունի բժշկի պատուէրին համաձայն, նշանակած ժամանակին և ինչպէս հարկըն է:

4. Աստուած այնպէս է կարգաւորել, որ մարդս կարող է Աստուծոյն ճանաչել,

և հասկանալ Նրա կամքը ինչպէս երկրնքում այնպէս և երկրի վրայ այն պայմանով միայն, եթէ նա ուշի ուշով հաւատով և սիրով կկարդայ Ս. Գիրքը, եկեղեցի կգնայ, Ս. Հոգու շնորհը իւր վրայ հրաւիրելու և կապրի Աստուածային պատուէրներին համաձայն:

Հենց այդպէս էլ պատահում է և միւս բաների հետ: Երկրագործը զուր կսպասէր առատ հունձի, եթէ նա լաւ ցանք չէ արել և իր ժամանակին: Մանուկը զուր տեղը նստած կնայէր, թէ երբ կպատուի իւր բզզանը եթէ նրան առաջուց բաց չէ թողել: Այս փոքրիկ ազնիկը, որ հենց նոր է սկսել խօսել, մինչև որ չսկսի սովորել, ոչ կարդալ կարող է իմանալ և ոչ կարել: Առանց այս կամ այն պայմանի, դուք չէք կարող մեծացնել ոչ միայն մի ծաղիկ, բայց և մի հասարակ խոտ կամ բանջար:

Շարունակեցէք լսել: Աստուածանից մարդուն պարզեաճ ամենամեծ բարիքը յաւիտենական կեանքն է, որ զնեց մեզ համար մեր Տէր Յիսուսը իւր արիւնով: Բայց այս պարզեն էլ նոյնպէս անկարելի է ստանալ առանց պայմանի: Մահականացուներից ոչ ոք չէ կարող երկինքը զնալ առանց ապաշխարութեան: Ոչ Յոբը կարողացաւ, ոչ Դաւիթը, մինչև անգամ Պետրոսը, Պօղոսը և Յովհաննէսն էլ չկարողացան: Մի խօսքով այժմ երկնքում ապրող արդարներից ոչ մէկը այնտեղ մտնել չկարողացան առանց ապաշխարութեան: Այս պայմանը քարոզեց մեր Տէր Յիսուսը. Նրանից յետոյ նոյնը քարոզեցին Ս. Առաքեալները, և ապա միւս ճշմարիտ քարոզիչները: Աշխարհի ոչ մի մեղաւոր, ով էլ որ լինի, անկարող է առանց ապաշխարութեան երկինքը զնալ: Եթէ մենք ճիշդ կարո-

ղանայինք զիտենալ, թէ որքան են իրանց մեղքը ապաշխարողները և ովքեր են նրանք, այն ժամանակ մենք պարզ կարող էինք ասել երկինքը զնացողների և անունները, և թիւը: Ամենքը, ամենքը պէտք է ապաշխարեն: Քրիստոսը ասում է. Եթէ չէք ապաշխարիլ, դուք ամենքդ էլ կկորչէք. (Ղուկ. ԺԳ. 3): Նոյնպէս ասում է և Պօղոս առաքեալը. Աստուած ամեն մարդու պատուիրում է ապաշխարել. (Գործ. ԺԷ. 30): Այստեղ տեղիք չկայ կասկածելու թէ ով պէտք է ապաշխարի—ամեն մարդ պարտաւոր է, ով մեղք է գործել:

Բայց ահա այս տեղ մի մեծ հարց է ծագում. Ի՞նչ է նշանակում ապաշխարել:

Դուք բոլորդ զիտեք որ երկու տեսակ զրամներ կան՝ իսկական և կեղծ: Գուցէ մէկի տունը լի է կեղծ զրամներով, սակայն չէ կարելի ասել որ նա փող ունի:

Կեղծ դրամը նրա համար ոչինչ բանի չէ ծառայում: Այդպէս և երկու տեսակ ապաշխարութիւն կայ, մէկը—իսկական, ճշմարիտ, իսկ միւսը—կեղծ, ոչ մի բանի չծառայող: Երբեմն, ըստ երեւոյթին, նրանց մէջ զանազանութիւնը շատ մեծ չէ, այնպէս՝ ինչպէս յիշեալ երկու դըրամների մէջ. այն ինչ մէկով կարելի է մի բան գնել, իսկ միւսը բոլորովին ոչինչ բանի պիտանի չէ. այն երկու ծառերի նման, որոնք թէ և կարող են միատեղ կանգնած լինել և միմեանց նմանուել, սակայն մէկը իսկապէս բարի պտուղ է տալիս, իսկ միւսը միմիայն տերեւներով է ծածկուում: Բայց մենք պէտք է բացատրենք, ինչ է նշանակում ապաշխարել: Լսեցէք ուրեմն. ես կփորձեմ ձեզ հասկացնել այդ:

Իմ կոչումն ունեցող պաշտօնակիցներին մէկը, ինձ միանգամ պատմեց իւր

մասին հետեւեալը. յոյս ունեմ որ նրա պատմութիւնը ինքն ըստ ինքեան ցոյց կտայ, թէ ինչ է նշանակում ապաշխարել: «Ես» ասում էր նա, մի շատ բարի հայր ունէի: Ֆանկանալով ինձ զուարճութիւն պատճառել՝ նա շատ անգամ տանում էր ինձ իւր հետ զանազան տեղեր: Թուում էր ինձ, որ նա այն ժամանակն էր իւրեան բաղդաւոր—զգում, երբ ինքս բաղդաւոր էի: Բայց երբ ես վեց տարեկան էի, նա մի անգամ սաստիկ հիւանդացաւ: Մայրս նոյնպէս հիւանդ էր, և այդ պատճառով, բացի երկու քոյրերիցս ոչ ոք չկար հօրս վրայ խնամք տանող: Մի քանի օրից յետոյ նա աւելի վատացաւ, այնպէս որ ստիպուած եղանք հարեան բժիշկներին մեր տունը հրաւիրել: Հետեւեալ կիրակի վաղ առաւօտեան, առաջուանից աւելի վատ էր զգում իւրեան: Երբ մտայ սենեակը նրա մօտ, նա

ձեռքը մեկնեց դէպի ինձ և ասաց. «Քեֆա լաւ չէ՛, Միքայէլ, վերցրու այն դեղատոմսը, որ վառարանի վրայ դրած է և տար դեղագործի մօտ, և երբ նա կ'ապտրաստի նշանակած դեղը, որքան կարելի է շուտ հասցրու ինձ»։ Ես վերցրի թուղթը և զնացի դեղատուն ինչպէս և առաջ շատ անգամ զնում էի այնտեղ։ Գրեղատունը վերստաչափ հեռի էր մեր տանից։ Ես շուտով հասայ դեղատուն, բայց նա փակած էր իսկ դեղագործը դեղատնից կէս վերստ հեռաւորութեան վրայ էր բնակուում։ Ես չուզեցի նրան որոնել և ուղիղ տուն զնացի։

Մանապարհին ես մտածում էի թէ ինչ ասեմ։ Ես զիտէի, որ մեղք է սուտ խօսել, բայց մի մեղքի վրայ աւելանում է միշտ և մի ուրիշ մեղք։ Երբ հօրս մօտեցայ, տեսայ որ նա խիստ տանջուում

էր։ Յաւի սաստկութիւնից նրա ճակատի վրա երևում էին քրտնքի խոշոր կաթիլներ։ Ես սաստիկ կսկիծ զգացի որ ծուլացայ որոնել դեղագործին։ Վերջապէս, հայրս ինձ տեսնելով՝ ասաց. «Յոյս ունեմ որդիս դեղը բերած կլինի՛ դրութիւնս շատ ծանր է»։ Ես խղճահարուած զուլսս խոնարհեցրի և մի կերպ փրնթփրնթալով ասացի. «Այ, հայրիկ, պարոնը ասաց որ այդ տեսակ դեղ չունի»։ «Այդ տեսակ դեղ չկայ, այդ անկարելի է»։ Այս խօսքերի հետ հայրս մի առանձին հայեացքով նայեց ինձ վրայ, և տեսնելով որ զլխակոր կանգնած եմ, և երևի կասկածելով որ սուտ եմ խօսում, չափազանց բարի և մեղմ ձայնով ասաց. «Ես երբեք չեմ կրնայիք ինչ որ ասում եք, երբեք չեմ կրնայիք ինչ որ ասում եք, երբեք չեմ կրնայիք ինչ որ ասում եք»։ Ես դուրս զնացի սենեակից, և առանձնացած՝ դառ-

նապէս արտասուեցի: Ինձ կրկին ներս կանչեցին շուտով: Այդ ժամանակ վրայ հասան և իմ եղբայրները, այժմ բոլոր որդիքը շրջապատած էին հօր անկողինը. խղճալի մօրս նրանց խնամատարութեան յանձնելով, նա իւր վերջին հրաժեշտն էր տալիս նրանց:

Ամենից փոքրը ես էի. և ահա, երբ նա ձեռքը դնելով զլսիս վրայ ասաց, որ մի քանի ժամից յետոյ այլ ևս հայր չեմ ունենալ, որ մի քանի օրից յետոյ նա գերեզման կիջնի, որ այսուհետև միմիայն Աստուած կլինի ինձ հայր, որ Մրան պէտք է սիրեմ, Մրան պէտք է հնազանդուեմ, այն անեմ ինչ որ Մրան հաճելի է, Բըր Եղբայրս ասե՛՛մ Մրան, որովհետև Աստուածային աչքը միշտ ինձ վրայ կլինի—այդ բոպէին ինձ թուում էր որպէս թէ ես մեռնումեմ, Եւ երբ նա ձեռքը կրկին դրեց զլսիս հրաւիրե-

լով Փրկչի օրհնութիւնը, ինչպէս անհայր որբի վրայ. ես՝ այլ ևս անկարող էի նայել նրան,—այնպէս էր խիղճս ինձ տանջում:

Հեկեկալով ես յետ քաշուեցի նրա մահուան անկողնից և մտածում էի թէ լաւ է որ ես էլ մեռնեմ: Շուտով ինձ ասացին որ նա այլ ևս խօսել չէ կարողանում: Ա՛խ, ի՛նչ ասես որ չէի տալ, միայն թէ թոյլ տային ինձ մօտենալ նրան և ասել որ ես սուտ խօսեցի նրա առաջ և կրկին խնդրէի ձեռքը դնել ինձ վրայ և ներել:

Մի անգամ էլ ծածուկ ներս ընկայ նրա սենեակը, բայց լսեցի միայն հոգեհանգստեան աղօթքը, որ հենց նոր էր սկսել քահանան: Ա՛խ, որքան ծանր էր ինձ համար: Սաստիկ նեղսրտած, ես վազեցի դեղազործի մօտ և նրանից ստացայ դեղը: Բոլոր ուժովս առն վազեցի

և մօտ գնալով, ընկայ հօրս անկողնի վրայ և նոյն բուպէին դառն արտասուքով զզջացի նրա առաջ մեղքս և ասացի. « Հայրիկ, ահա զեղը»: Բայց ինձ արգելեցին. ես նայեցի նրա երեսին, նա արգէն բոլորովին գունատուել էր. սենեակում զանուղների վրայ նայեցի, նրանք բոլորն էլ կանգնած արտասուում էին: Հայրս ի՞նչ Բանկագին հայրէկա մե—: Եւ իմ վերջին խօսքը, որ ասացի հօրս:— « Ես եմ քեզ հայրս: Ես այնպէս էի հեկեկում, որ քեզ էր մնում սիրտս պատուել. որովհետեւ Նրա փաղաքշանքը, սիրալիր հայեացքը, խօսքերը և իմ ստախօսութիւնը,— այս բոլորը միանգամից սիրտս տալն ու վրայ արին: »

Այնուհետեւ, երբ ես նայեցի նրա սառը, գունատ երեսին, փակած աչքերին, ամուր սեղմած շրթունքներին, ակամայ ես լսում էի նրա վերջին խօսքերը. « Ահա »

դու կտեսնես, Միքայէլ, որքան վատ կլինի հօրդ համար, հենց այն պատճառով որ նշանակած տեղը չունենք: Ես միմիայն այն էի մտածում, որ նրա մահունան պատճառը ես էի, որ զեղը չբերի:

Երեք օրից յետոյ նրան թաղեցին: Թաղմանը շատ քահանաներ կային. նրանք բոլորը ինձ հետ քաղցրութեամբ էին վարուում. բայց մխիթարել անկարող էին: Աւաղ, նրանք չգիտէին թէ ինչ խորին վիշտ էր ծանրացել սրտիս վրայ: Ծուտով բոլոր եղբայրներս ու քոյրերս ցրուեցան զանազան կողմեր, որովհետեւ թոյլ և աղքատ մայրս անկարող էր նրանց կերակրել:

Տասն և երկու տարի անցած, երբ ես արգէն միջնակարգ դպրոցումն էի, մեն մենակ այցելութեան գնացի հօրս գերեզմանին: Դժուարութեամբ գտայ նրան. Բայց շուտով ճանաչեցի այն համեստ

տապանաքարից, որ դրուած էր նրա վրայ, և ահա երբ ոտքս դրի նրա վրայ, ինձ թուում էր, որ կրկին նրա անկողնու մօտ կանգնած, տեսնում եմ նրա զունատ դէմքը և լսում նրա ձայնը: Ո՛հ, նրա առաջ ստախօսելու ծանր մտածմունքը, նորից դանակի նման ցցուեց սրտիս մէջ: Ես մտածում էի, որ եթէ իմ իշխանութեան տակ ամբողջ աշխարհներ ունենայի, նրանց էլ չէի խնայիլ, որ գէթ մի բոպէ կարողանայի նրան զարթեցնել և ներողութիւն խնդրել նրանից: Բայց արդէն ուշ էր, ես պէտք է ապրեմ և մեռնեմ, ապերախտ ստախօսութիւնս ողբարով: Տէր, թողութիւն աուր մեղքիս»:



ոյլ աուէք այժմ, մանուկներ, մի քանինկատողութիւն անել ձեզ այս դէպքի մասին:

1. Դուք տեսնում էք որ մանուկն էլ կարող է մեղք դործել: Կարող է մեղանչել հօր դէմ, միևնոյն ժամանակ և Աստուծոյ դէմ: Աստուած հրամայում է մեզ հնազանդուել ծնողներին և ճշմարիտը խօսել: Մանուկը որի մասին մենք խօսեցինք, ոչ հօրը լսեց և ոչ ճշմարիտն ասաց:

2, Դուք տեսնում էք, որ երեխան իսկ, չնայելով իւր մանուկ հասակին, կարող է զղջալ հօր դէմ գործած մեղքը:



Մշանակում է սխալուում են նրանք, որոնք մտածում են, իբր թէ մանուկների համար հարկաւոր չէ կամ անհնար է զըզջումն: Եթէ այդ մանուկը կարողացաւ զըջալ երկրաւոր հօր դէմ գործած մեղքը, ինչո՞ւ չի կարող զըջալ և երկնաւոր հօր դէմ գործած մեղքերը:

3. Գուք տեսնում էք ինչ է նշանակում ճշմարիտ զըջումն Աստուծոյ առաջ: Ճշմարիտ զըջալ, նշանակում է տանջուել սրտով, որ դուք մեղանչել էք Աստուծոյ առաջ, ճիշդ այնպէս, ինչպէս սաստիկ տանջուում էր մեղաւոր մանուկը, մեռնող հօր առաջ: Մա այդչափ ծանր տանջուում էր ոչ նրա համար, որ երկիւղ էր կրում հայրական պատժից, այլ նրա համար, որ հայրը շատ բարի էր դէպի նա. այն ինչ նա, ընդհակառակն, այդքան վատթար զանուեցաւ իւր հօր վերաբերմամբ:

Իսկ եթէ նա իւր բոլոր մեղքերը նոյնպէս զըջար Աստուծոյ առաջ, ինչպէս հօր դէմ գործած թէ մեղքը զըջաց, այն ժամանակ նրա մասին կարելի է ասել, որ նրա զըջումը անկեղծ էր և ճշմարիտ:

4. Գուք տեսնում էք, որ եթէ մենք Աստուծոյն նոյնպէս շատ սիրէինք, ինչպէս սիրում ենք մեր հօրն ու մօրը, մեր զըջումն էլ նոյնչափ բարձր և հաստատուն կլինէր. բայց ոչ. նա անհամեմատ բարձր և հաստատուն կլինէր, որովհետեւ Մա հազար անգամ աւելի շատ բարիքներ է ստեղծել, և ստեղծում է ամեն օր մեզ համար, քան մեր ծնողները և մենք. հազար անգամ աւելի ենք մեղանչում Մրա առաջ, քան այն մանուկը իւր հօր առաջ:

Ժամանակով լինում է մի վատթար և արդէն հասակաւոր մանուկ, որը ինչ էլ որ լինէր, վճռում է թողնել հայրական

1002  
6196

առևեր և ծովով ճանապարհորդել: Հայրը թէև համոզում էր յետ կանգնել այդ փորձութիւնից, որ կարող էր երկարատե ել չլինէր, բայց ի զուր, ինչ մտածել էր, այն էլ կատարեց: Գաղանի շարժառիթը այստեղ չար մտածմունքներն էին, որ հօր աչքից հեռանալով, ամեն աններելի բան կարողանար անել: Հրաժեշտի ժամանակ, հայրը արտասուքը աչքերուով, որպէս օրհնութիւն, սուրբ Աւետարանը տուեց և պատուիրեց նրան որքան կարելի է շուտ շուտ կարգալ մարդուն պարգևած այդ Աստուածային կտակարանը:

Եւ յերաւի այդ երիտասարդը ինչպէս և ցանկանում էր սկսեց չար կամքին հետեւել, չմտաբերելով ոչ Աստուծոյ և ոչ Աստուածային կտակարանը: Բայց Աստուած տեսնում էր նրան և աչքը միշտ նրա վրայ էր պահում: Ժովի վրայ սար-

սափելի փոթորիկ բարձրացաւ. նաւը այլ ևս ոյժ չունէր նրա հետ կռուելու:

Վրայ հասաւ մթին զիշերը—և նաւը զիպաւ ծովափնեայ քարի: Մկուռեց զարհուրելի իրարանցումն. փոթորիկը մռնչում էր. թշուառ նաւորդները ողբում էին, յուսահատ նաւաստիները այս ու այն կողմն էին ընկնում. հազիւ վերջապէս—լսելի էին դառնում նաւապետի հրամանները . . . Հենց այս տեղ տարաբաղդ երիտասարդը զղջալով մտաբերեց հայրական տունը:

Բայց զղջալու ժամանակամիջոցը կարճ էր. ահագին ալիքներ. զիզուեցան նաւի վրայ և շատ վեր բարձրացրին նրան. այնուհետեւ ալիքների հետ ի միասին զարկուեցաւ ուրիշ—ծովային քարի և հենց տեղն ու տեղը փշուր փշուր եղաւ:

Աստուծոյ ողորմութեամբ նոյն ալիքները մեր թշուառ երիտասարդին կիսա-

մեռ շարանցին ժայռի վրայ: Առաւօտեան նա ուշքի եկաւ. նրան գտան ժայռի վրայ գիրքը ձեռքին: Դա Ս. Աւետարանն էր, որ ազատուելէր նրա համար, նրա կեանքի հետ ի միասին:

Բաց անելով, հենց առաջին թերթի վրայ տեսաւ իւր հօր ձեռքը: Մոյն իսկ այդ րուպէին հօր սիրուց զգացուած, իսկոյն և եթ հասկացաւ իր ապերախտութիւնը գէպի նա և սկսեց արտասուել:

Մա կրկին բացեց Աստուծոյ Կտակարանը. և ինչ տեսաւ: Իւրաքանչիւր երեսի վրայ այժմ նրա առաջ երևան էր գալիս երկնաւոր Հօր ձեռքը: Մա մտաբերեց իւր մեղքերը Աստուծոյ առաջ — և կրկին արտասուեց:

Մա անկեղծ սրտով զղջաց և ճշմարտապէս ապաշխարեց. և այդ օրից քրիստոնէավայել կեանք վարեց: Այժմ նրան մի մեծ նաւի հրամանատար են նշանա-

կել, բայց նա այդ ծանր ծառայութեան մէջն էր, չէ մոռանում Փրկիչ Յիսուսին ծառայելու: Այդ էր ահա ճշմարիտ զղջումն:

Այժմ հարկաւոր է ձեզ՝ թէև համառօտ բացատրել, մանուկներ, թէ ինչ՞մեզ բողոքիս էլ անհրաժեշտ է ապաշխարութիւն:

Մախ այն պատճառով, որ մենք բողոքս էլ մեղանչել, մշտապէս մեղանչում և անհամար մեղանչում ենք: Աւելի հեշտ է համարել մեր հանդէպ գտնուած այս մանուկի զլիսի մաղերը, քան մեր հոգու վրայ ծանրացած մեղքերը: Հարցրէք ձեր ծնողներին և ուսուցիչներին, հետաքրքիր եղէք Աստուածային պատուէրներին, հարցրէք ձեր խղճին, որը ինչպէս պահապան կանգնած է ձեր սրտի մօտ. սրանք բողոքն էլ ձեզ կասեն, ո՛ւր, երբ, ինչպէս և քանի՞ անգամ մեղանչել էք դուք:

Երկրորդ այն պատճառով, որ առանց զղջման անհնարին է այս կամ այն մեղքից հրաժարուել: Պուք կարող էք մարդուն յետ կանգնեցնել զողութիւնից, մահուան դատապարտելով կամ բանտարկելով, բայց կարող էք արդեօք յետ կանգնեցնել նրան զողութիւն անելու ցանկութիւնից: Իսկ այդ, որ և է բան զողանալու ցանկութիւնը ինքն ըստ ինքեան արդէն մեղք է Աստուծոյ առաջ: Ասենք թէ, այս՝ երբեմնակի սուտ խօսող մանուկի լեզուն կտրեն, այնպէս որ նա այլ ևս խօսել չկարողանայ. հետեաբար անկարող է և ստախօսել. բայց արդեօք դրանով նրան կազատեն մեղքից: Ի՞նչ կարող ես անել, եթէ նա իր սրտում թաղցնի որ և է չար դիպաւորութիւն: Այն ինչ դիտաւորութիւնն էլ, եթէ նա բարի չէ, մեղանչական է և ինքն ըստ ինքեան արդէն մեղք է Աստուծոյ առաջ:

Սեւամորթ Հնդիկները մի քանի տարի սրանից առաջ, որոշեցին իւրեանց ցեղակիցներին զսպել մեղք զործելուց, և ի՛նչ հնարեցին: Հնարեցին տալ նրանց սաստիկ փսխելու դեղ, կարծելով որ այդ միջոցով կարող են նրանցից որոշոք բոլոր մեղքերը: Բայց դուք ինքներդ նրկատում էք որ սա ոչ մի հետեանքի չհասցրեց: Մեղքը սրտի մէջն է և ոչ ստամոքսի:

Այդ սեւամորթներից մէկը, որին փրսխողական էին տալիս, գնաց քաղաք և գնեց մի տակառիկ շաքարօղի, միւս սեւամորթների վրայ ծախելու: Վերադարձին նա պատահեց մի քարոզչի, որ Աստուծոյ խօսքն էր քարոզում այն զաւառում: Այստեղ նա կանգ առաւ և լսում էր նրան: Քարոզը այնպիսի զօրեղ ազդեցութիւն զործեց նրա վրայ, որ նա վճռեց իւր կեանքի եղանակը փոխել: Եւ

ինչից սկսեց: Նրանից որ իսկոյն յետ տարաւ քաղաքում գնած շաքարօղու տակառիկը, յայտնելով մի և նոյն ժամանակ վաճառողին, որ այսուհետև ողելից ըմպելիքներ ոչ պէտք է խմէ և ոչ ծախէ:

Վաճառականը սկզբից չէր կամենում վաճառած տակառիկը յետ վերցնել. բայց տեսնելով որ սեւամորթը վճռել է հակառակ դէպքում շաքարօղին գետը թափել (Օհիօ գետ), կատարեց նրա ցանկութիւնը: Ասացէք, ինչը կարող է ստիպել սեւամորթին հրաժարուել իւր սաստիկ ցանկութիւններից դէպի ըմպելիքները, եթէ ոչ զղջումն: Այդպէս և միմիայն զղջումն կարող է յետ կանգնեցնել մեզ այս կամ այն մեղքից:

Երրորդ այն պատճառով, որ ոչ ոք Աստուծոյն ծառայել չի կարող նախապէս չզղջալով իւր մեղքերը: Քրիստոսը

ասում է, որ ոչ ոք երկու տիրոջ ծառայել չի կարող: Գիցուք ձեզանից մէկը իւրաքանչիւր ձեռքում մի մի մեծ խնձոր ունի, և շարունակելով բռնել, մի և նոյն ժամանակ կաշխատէ մէկ մէկ մեծ նարինջ էլ բռնել իւրաքանչիւր ձեռքով: Բայց միթէ՞ սա կարելի է: Ի հարկէ ոչ. քանի որ երկու ձեռքն էլ լիքն է: Հենց այսպէս է և սիրտը. եթէ նա լի է մեղքերով, Աստուծոյ սիրոյ համար այլ ևս ո՞րտեղից կարող է տեղ լինել: Ուրեմն եթէ դուք ցանկանում էք դադարել մեղանչելուց, նախ և առաջ պէտք է ապաշխարէք: Եթէ դուք ցանկանում էք ծառայել Աստուծոյն և ձեր Տէր և Հայր ձանաչել Նրան, դարձեալ նախ և առաջ դուք պէտք է ապաշխարէք: Եւ դուք բոլորդ կարող էք այդ անել:

Դուք ի հարկէ տխրած կլինէք, երբ որ և է բանով վշտացրել էք ձեր ծնող-

ներին. Տեուեաբար հարող է+ տխրել և  
այն ժամանակ, երբ զգում էք որ վըշ-  
տացրել էք ձեր երկնաւոր Հօրը: ՅԹէ  
դուք չէք սովորելի կամ չէք կամենալ  
զղջալ իմացէք որ դուք կմեծանաք ինչ-  
պէս մեղաւորներ, կմեռնէք ինչպէս մե-  
ղաւորներ, մնալով միշտ և հանապաղ մե-  
ղաւորներ: Աճմարիտ որ այսպէս է:



232



0004519

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004519

